

ՀԱՄԱՆՈՒՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԱՆՈՒՆԱԿԱՆ
ՀԱՊԱԿՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Լեզվական դիմամիկ գործընթացների մեջ կարևորվում են բառերի իմաստային փոփոխություններն ու զարգացումները, այդ թվում՝ բառերի համանունությունն ու հարանունությունը: Ընդհանրապես բառերի իմաստային համակարգվածությունը դրսևորվում է նաև նրանց միջև համանունության և հարանունության առնչակցություններով: Բառագիտության ոլորտում տարածված և մշակված են հատկապես համանունությանն աղերսվող հարցերը:

Հայտնի է, որ համանունության առաջացման հիմնական միջոցներից մեկն էլ բառակազմությունն է (բարդ և ածանցավոր բառեր, խառը կազմություններ ու հապավումներ): Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ «հայերենը բառակազմական հնարավորություններով հարուստ լեզու է: Բայց համանուն բառերի առաջացումը տեղի է ունենում հիմնականում բառաբարդման և բառաածանցման միջոցով»¹:

Այնուամենայնիվ, համանունություն, այլև հարանունություն առկա է նաև բառակապակցությունների կրճատված մասերով (սկզբնահնչյուններով, սկզբնավանկերով և խառը կազմություններով) ձևավորված հապավական բարդություններում²: Ըստ որում, դրանք կարելի է դիտարկել թե՛ զուտ հապավումներում և թե՛ հապավում-արմատական բառ ձևաիմաստային յուրահատուկ փոխհարաբերության չղջանակներում՝ հիմք ընդունելով այն իրողությունը, որ համանուններ են կոչվում ձևով նույնական, իմաստով տարբեր³, իսկ հարանուններ՝ ձևով նման, իմաստով տարբեր բառեր⁴:

Ներկա հոդվածում ձևաիմաստային հայեցակետից քննության են առնվում համանունական և հարանունական (երբեմն՝ հոմանիշ, տարբերակային և հակահիշ) հապավումները ժամանակակից հայերենում: Հապավական բարդությունների հարցում արժեքավոր է Գ. Սևակի ներդրումը, որը բարդ

¹ Ռ. Ն. Շալունց, Համանուն բառերի առաջացման աղբյուրները հայերենում, Լեզվի և ոճի հարցեր, III, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1975, էջ 77:

² Համանունություն, ինչպես գիտենք, առկա է թե՛ հիմնական և թե՛ երկրորդական ձևությամբ, այսինքն՝ լեզվական այնպիսի միավորներում, որոնք ընդունակ են իմաստային փոփոխությունների և զարգացումների:

³ Տես Է.Բ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., ԵՊՀ, 1984, էջ 65:

⁴ Հմմտ. Հ. Զաքարյան, Յու. Ավետիսյան, Բառագիտություն, Եր., «Զանգակ - 97» հրատ., 2007, էջ 42:

բառերի շարքը դասեց այդօրինակ բաղադրությունները «նորագույն հապավումներ» անվանումով⁵։ Ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, հապավումը «գոյականական բառակապակցության բաղադրիչների կրճատմամբ կազմված բառարժեքային միավոր է, որը պահպանում է բառակապակցության կաղապարը և հիմնական բաղադրիչի խոսքիմասային արժեքը, այսինքն՝ հանդես է գալիս գոյականական գործառնությամբ»⁶։

Հապավական համանունների և հարանունների մեջ առկա են հիմնականում բառակազմության միջոցով, ինչպես նաև փոխառությունների հետևանքով ու քերականական ձևերից առաջացած այդօրինակ ձևափմաստային զույգեր կամ շարքեր։ Ըստ որում, նրանցում հանդիպում են թե՛ տառային, թե վանկային և թե խառը կազմություններ։ Անդրադառնանք նրանց առանձին-առանձին։

1. Հապավական համանուններ։ Հիմք ընդունելով այն համագամանքը, որ համանունները կարող են բաժանվել ինչպես նույնարմատ, այնպես էլ տարարմատ (պատահական զուգադիպությունների հետևանքով առաջացած), ինչպես բացարձակ, այնպես էլ նույնագիր, նույնահունչ, այլև քերականական կամ բառաքերականական⁷ խմբերի հապավումների շրջանակներում դիտարկենք ձևափմաստային այդօրինակ զույգերը կամ շարքերը։

Ա. Ընդհանուր բաղադրիչ (հապավույթ կամ թեմա) ունեցող հապավական բացարձակ համանուններ։ Այդ կարգի համանունական հապավումների մեջ ընդգրկում ենք այն բաղադրությունները, որոնք կազմվել են մեկ կամ ավելի ընդհանուր բառական բաղադրիչ ունեցող բառակապակցություններից։

1. Տառային հապավումներ։ Այդօրինակ բարդությունները կազմվում են բաղադրյալ բառերի կամ անվանումների տառային հապավույթներով⁸։

Հմնտ. հետևյալ համանունական հապավումները՝ համապատասխան բառակապակցություններով. ԱԿՀ¹ - ավտոմատ կառավարման համակարգ, ԱԿՀ² - ավտոմատ հեռախոսային կայան, ԱՀԿ¹ - Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, ԱՀԿ² - Առևտրի համաշխարհային կազմակեր-

⁵ Հեղինակը հապավում (աբբեվիատուրա) է կոչում բառակազմության այն տեսակը, որի դեպքում բարդ բառի բաղադրիչները (բոլորը կամ մի մասը) ոչ թե բառեր կամ արմատներ են, այլ բառից մեխանիկորեն վերցրած պայմանական մասեր, որոնք որևէ այլ գործածություն չունեն և չեն ունեցել (տես Գ. Սևակ, ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., Եր. համալս. հրատ., 1955, էջ 182)։

⁶ Գ. Բ. Ջահուկյան, ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., Հայկական խՍՀ ԳԱ հրատ., 1989, էջ 227։

⁷ Հ. Ձաքարյան, Յու. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 39-40։

⁸ Այդպես են կոչվում հապավական բաղադրության կազմում հապավված բաղադրիչները, որոնք լինում են տառային, վանկային կամ բառամասային (տես Ա. Ս. Սուքիասյան, ժամանակակից հայոց լեզու, Եր., Եր. համալս. հրատ., 1982, էջ 364)։

պություն, ԱՆ¹ - Առողջապահության նախարարություն, ԱՆ² - Արդարադատության նախարարություն, ԸՀ¹ - ընդունող հանձնաժողով, ԸՀ² - ընտրական հանձնաժողով, ՀԱԸ¹ - Հայաստանի աշխարհագրական ընկերություն, ՀԱԸ² - Հայաստանի աստվածաշնչյան ընկերություն, ՀԱԸ³ - Հայաստանի ավետարանչական ընկերություն, ՀԾ¹ - հայկական ծրագիր, ՀԾ² - հայկական ծխախոտ, ՀՕՍ¹ - Հայաստանի օգնության մարմին, ՀՕՍ² - Հայ օգնության մարմին, ՍԱԿ¹ - Սիավորված ազգերի կազմակերպություն, ՍԱԿ² - Սիավորված աշխատանքային կուսակցություն:

2. Վանկային հապավումներ: Այդպես են կոչվում վանկային թեմաների⁹ կազմված հապավական բարդությունները:

Հմմտ. հետևյալ համանունական զույգը, որում վանկային ընդհանուր թեման վերջադաս է. բանֆակ¹ - բանվորական ֆակուլտետ, բանֆակ² - բանասիրական ֆակուլտետ:

Ստորև բերվող վանկային հապավումներում թեև և նախադաս, և վերջադաս դիրքերում առկա են ընդհանուր թեմաներ, սակայն զործ ունենք ձևով նույն, իմաստով տարբեր (համանունական) հապավումների հետ¹⁰.

հեղկոմ¹ - հեղափոխական կոմիտե, հեղկոմ² - հեղափոխական կոմիտեի նախագահ, տեղկոմ¹ - տեղական կոմիտե, տեղկոմ² - տեղական կոմիտեի նախագահ, տնտեսվար¹ - տնտեսության վարիչ, տնտեսվար² - տնտեսական գծով վարիչ:

3. Խառը հապավումներ: Այդ կարգի բարդություններում առկա են մասամբ տառային, մասամբ վանկային թեմաներ: Հնարավոր է նաև, որ հապավական բաղադրության վերջին բաղադրիչն ամբողջական բառ լինի¹¹:

⁹ Թեմաներ են կոչվում բառերից կամ արմատներից մեխանիկորեն կառված «բեկորները», որոնցով կազմվում են հապավումները: Այդօրինակ թեմաները հապավման կազմում կարող են ունենալ մեծ մասամբ առաջադաս, երբեմն վերջադաս, ինչպես նաև միաժամանակ և առաջադաս, և վերջադաս գործածություն: Ըստ որում, «հապավման թեմաների հնչյունաբանական ուսումնասիրությունը հաստատում է, որ թեմաներն անփոփոխ ու կայուն բեկորներ են պարզ, բարդ կամ բարդ ածանցավոր ամբողջական բառերի, հանդիսանում են նրանց ներկայացուցիչը կամ սիմվոլը և թեմայի ու արմատի բացարձակ նմանության դեպքում էլ նրանք նույնական չեն» (տես Գ. Սևակ, Գշվ. աշխ., էջ 186, 188, 198):

¹⁰ Մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ «բառիմաստի ամենափոքր փոփոխությունը նրան ուրիշ բառ է դարձնում» (տես А. А. Потебня, Из записок по русскому грамматике, Т. 1, М., Учпедгиз, 1958, էջ 15):

¹¹ Հմմտ. հետևյալ վանկա-տառային և տառա-բառային, ինչպես նաև սիմվոլային (տառային) և վանկային հապավումները, որոնք ձևային մասնակի տարբերությամբ հանդերձ պահպանել են իմաստային նույնականությունը, այսինքն՝ հապավական տարբերակներ են. երևհեկ // երևահեկ (երևանի հեկ), ԿԿ // կոմկուս (կոմունիստական կուսակցություն):

Այս իմաստով ուշագրավ է համանունական հետևյալ զույգը. առբաժին¹ - առողջապահության բաժին, առբաժին² - առևտրի բաժին:

Բ. Տարբեր բաղադրիչներով (հապավույթներով կամ թեմաներով) կազմված հապավական բացարձակ համանուններ: Բարդությունների այսօրինակ զույգերում առկա են ընդհանուր բաղադրիչ (բաղադրիչներ) չունեցող և ձևով պատահաբար համընկնող հապավումներ: Ըստ որում, նրանցում հաճախադեպ են տառային հապավույթներով կազմված բարդությունները, որոնք էլ ներկայացնում ենք ստորև.

ԱԿ¹ - արտադրական կոդպերատիվ, ԱԿ² - ազատ կապակցություն, ՊՄ¹ - գրողների միություն, ՊՄ² - գերագույն մարմին, ՀԱՀ¹ - Հարավ-Աֆրիկյան Հանրապետություն, ՀԱՀ² - Հայաստանի ամերիկյան համալսարան, ՀԲ¹ - Համաշխարհային բանկ, ՀԲ² - հայկական բանակ, ՀՂՄ¹ - հսկիչ դրամարկղային մեքենաներ, ՀՂՄ² - համեմատություն-դարձվածային միավորներ, ՎՀ¹ - Վրաստանի Հանրապետություն, ՎՀ² - վերահսկիչ հանձնաժողով:

Գ. Պարզ (արմատական) բառերի և հապավական բարդությունների համանունություն: Լայն առումով դիտարկելով համանունությունը այդօրինակ զույգեր կամ շարքեր ենք նկատում ոչ միայն արմատների, արմատների և ածանցների, բառերի և բառածևների, զուտ բառածևների, ինչպես նաև բառահարաբերական երկրորդական ձևւթների կամ վերջավորությունների շրջանակներում, այլև պարզ բառերի (երբեմն բառածևների) ու հապավումների մեջ: Այս իմաստով հիմնականում տարբերակվում են նույնահունչ և նույնածև (բառաբերականական) համանուններ: Անդրադառնանք դրանց առանձին-առանձին:

1. Նույնահունչ (արտասահմանությամբ համընկնող) համանուններ. ԱԿ¹ - արտադրական կոդպերատիվ, ԱԿ² - ազատ կապակցություն, ալ³ - 1. թանկագին քար, 2. մատանու քար, ալ⁴ - անիվ, ալ⁵ - ակունք, ԲԱՄ¹ - Բժիշկներ առանց սահմանի, բաս² - ցածր, թավ ու հաստ ձայն, ԴԱԿ¹ - դիմադրողականության անկման վարակ, դավ² - խարդավանք, «ԵրԱզ»¹ - Երևանի ավտոմոբիլային գործարան, Երազ² - Երազանք, ՀԱԲ¹ - Հայ ազգային բանակ, հաբ² - դեղահատ, ՊԱՍ¹ - պետական ավտոտեսչություն, պատ² - 1. որմ, 2. պարիսպ, 3. պտույտ, 4. պատանման շարք, պատ³ - խաղավիճակ շախմատում:

Ինչպես տեսնում ենք, արտասահմանությամբ նույնական համանուններն այս դեպքում տարբերվում են զուտ ուղղագրական առումով (մեծատառ-փոքրատառ գրությամբ): Խնդրո առարկա համանուններում կան այնպիսիները, որոնցում թե գրությունը (մեծատառ-փոքրատառ) և թե արտասահմանությունը (ըստ երանգի) մասնակիորեն տարբերվում են. ԱԽ¹ - Անվտանգության խորհուրդ, ախ² - հաճելիություն (կամ տհաճություն), դժգոհություն, ինչպես նաև զղջում,

ափսոսանք արտահայտող ձայնարկություն, ես¹ - եվրոպայի խորհուրդ, է² - հանդիմանություն, կշտամբանք կամ զղջում, ափսոսանք արտահայտող ձայնարկություն, ՅՕՊ¹ - հակաօդային պաշտպանություն, հոպ² - կամային վերաբերմունք արտահայտող ձայնարկություն, եհ¹ - եվրահամայնք, է² - հանդիմանություն կամ անտարբերություն, համակերպում ցույց տվող ձայնարկություն, ՕՖ¹ - Օգնության ֆոնդ, օֆ² - դժգոհություն կամ կշտամբանք, հանդիմանություն ցույց տվող ձայնարկություն:

Ուշագրավ են նաև համաճումական հետևյալ զույգերը. գէս¹ - հիդրոէլեկտրակայան, գէս² - գիսակ, ժամ, վարս¹², ՆԱՏՕ¹ - Յիւսիս-ատլանտյան դաշինքի կազմակերպություն, Նատո² - Նատայա անձնանվան կրճատ տարբերակը:

2. Նույնաձև (բառաբերականական) համաճումներ: Այսօրինակ համաճումները նույնպես դրսևորում են ուղղագրական (մեծատառ-փոքրատառ գրության) տարբերություններ:

Հմտ. ԳԱՍ¹ - գիտական աշխատողների սեկցիա, գաս² - գալ բայի ըղձական եղանակի ապառնի ժամանակը, եգակի թիվ, երկրորդ դեմք, ԳԱՍ¹ - գիտարտադրական միավորում, գամ² - գալ բայի ըղձական ապառնին, եգակի թիվ, առաջին դեմք, ԵՍ¹ - Եվրամիություն, Եվրոպական միություն, եմ² - եմ օժանդակ բայի սահմանական եղանակի ներկա անկատար ժամանակաձևը, եգակի թիվ, առաջին դեմք, ԻՍ¹ - ինքնավար մարզ, իմ² - ես դերանվան սեռական հոլովը, եգակի թիվ, ՉԵԿԱ¹ - ռուս. արտակարգ հանձնաժողով, չեկա² - գալ բայի սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևը, եգակի թիվ, առաջին դեմք, ժխտական խոնարհում:

Հմտ. նաև համաճումական հետևյալ շարքը, որի անդամները դրսևորում են արտասահմանական ընդհանրություն. ԱՍԵԱՆ¹ - Հարավարևելյան Ասիայի պետությունների միավորում, Ասիամ² - Ասիա տեղանունը՝ որոշյալ առումով, Ասյան³ - Ասյա անձնանունը՝ որոշյալ առումով:

Դ. Համաճումական հապավումներ և խոսքային միջավայր: Հապավումների գործածության հարցերը դեռևս մանրամասն քննության չեն ենթարկվել, թեև գործառական առումով ևս կարևորվում է նրանց դերը:

Հայտնի է, որ հապավումների առաջացումը մեծապես պայմանավորված է եղել գիտատեխնիկական առաջընթացով. հապավումները մեծ մասամբ բաղադրյալ տերմինների կրճատված մասերի միավորումով են կազմվում: Մասնագիտական գրականության մեջ այս առումով նշվում է, որ «հապավումները

¹² Գէս և հէկ հապավումները հանդես են գալիս որպես նույնանիշներ:

գրավոր լեզվի ստեղծագործությունն են: Հապավումը հիմնված է տեխնիցիզմի և մեխանիցիզմի պատվանդանի վրա»¹³:

Հապավումներն առավել հաճախադեպ են գիտական (այլև գեղարվեստական) ոճում: Ըստ որում, հապավումների իմաստային յուրացումներն առավել պարզ ու որոշակի երևում են հենց խոսքային միջավայրում:

Հմնտ. հետևյալ տառային համանունական հապավումների գործածությունը. Հայաստանի Կ(ք)Պ ԿԿ-ի 1943թ. հունիսի 8-ի և Հայկական ՍՍՌ-ի Լուս-ժողկոմատի կոլեգիայի նույն ամսի 18-ի որոշումները միջնակարգ դպրոցներում հայոց լեզվի ուսուցման դրվածքը բարելավելու մասին, մեծ պարտավորություններ են դնում դպրոցական բոլոր աշխատողների վրա (ԱՂ, 408): Խոսքիմասային տարարժեք բառերը, իբրև բազմիմաստ միավորներ, կարող են հանդես գալ նաև կայուն կապակցությունների (հետայսու ԿԿ) շրջանակներում դարձվածակազմիչ դերով (ԼԽ, 6):

ՀԳՄ կտրոնների վիճակահանությունը կկատարվի յուրաքանչյուր ամսվա վերջում (հեռուստատեսային հաղորդումներից): Քննելով հայերենի (գրաբարի) գունային բաղադրիչներով ՀԳՄ-ների իմաստաբանությունը՝ նկատում ենք, որ այդ կարգի կառույցների գերադաս բաղադրիչի դերում, որպես կանոն, հանդես է գալիս գունանվան համակարգի միջուկներից մեկը (ԼԽ, 22-23):

Հմնտ. նաև նույնահունչ ԵՄ¹ - Եմ² և ՆԱՏՕ¹ - Նատո² համանունական գույգերի իրացումները խոսքում. Շուտով կսկսվեն ՀՀ ՏԻՄ ընտրությունները, որոնց կմասնակցեն ԵԱՀԿ և ԵՄ դիտորդները (ՀՁ, ՅԱ, 7-8): Եմ և Էի օժանդակ բայերով կազմված եռանդամ հակադրությունների ամեն մի ժամանակային ծևի իմաստը տարբերվում է մյուսներից՝ ժամանակային հաջորդականության հատկանիշով (ՍԱ, 172): Մի առանձին խումբ են կազմում ռուսերենից ուղղակիորեն կամ նրա միջոցով այլ լեզուներից փոխառված հապավումները ՆԱՏՕ, ՖԻԴԵ, ՅՈՒՆԵՍԿՈ, ՈՒԵՖԱ (ԱՄ, 165, 180): Միայնակ և տխուր նստած էր Նատոն ճրագի մոտ (Բ, 133):

II. Հապավական հարանուններ: Մասնագիտական գրականության մեջ հարանուն են կոչվում միևնույն, երբեմն էլ տարբեր բառային հիմքերից կազմված, մոտ հնչում ունեցող, բայց իմաստով տարբեր բառերը¹⁴:

¹³ Տես Գ. Սևակ. նշվ. աշխ., էջ 183:

¹⁴ Տես Ա. Ա. Սարոբյան. Հայոց լեզվի ոճաբանության գործնական աշխատանքների ձեռնարկ, Եր., «Զանգակ-97» հրատ., 2002, էջ 55:

խնդրո առարկա (հարանունական) բաղադրություններում առավել տարածված են տառային¹⁵ և խառը (երբեմն վանկային) հապավումները: Ներկայացնենք դրանք համապատասխան բաղադրյալ անվանումներով հանդերձ:

Ա. Տառային հապավումներ. ԱԿԴ¹ (ավտոմատ կառավարման համակարգ), ԱԿԴ² (ավտոմատ հեռախոսային կայան) - ԱՅԿ¹ (Առողջապահության համաշխարհային կազմակերպություն), ԱՅԿ² (Առևտրի համաշխարհային կազմակերպություն), ԲՈՂ (բարձրագույն որակավորման հանձնաժողով) - քուհ (բարձրագույն ուսումնական հաստատություն), ԱՕԿ (ազգային օլիմպիական կոմիտե) - ԱՕԿՍ (ռուս. Արտասահմանի հետ մշակութային կապերի հայկական ընկերություն), ԳՖ (գեղարվեստական ֆիլմ) - ԳՖՅ (Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն), ԵԱԳ (Եգիպտոսի Արաբական Հանրապետություն) - ԵԱՀԽ (Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհուրդ), ԵԽ (Եվրոպայի խորհուրդ) - ԵԽԴ (Եվրախորհրդի հանձնաժողով), նաև ԵՀԽ (Եկեղեցիների համաշխարհային խորհուրդ), ԱԺ (Ազգային ժողով) - ԱԺԴ (Ազգային - ժողովրդավարական դաշինք), նաև ԱԺՍ (Ազգային - ժողովրդավարական միություն), ԶԴԿ (զենիթահրետանային կայանք) - ԶԴԳ (զարգացման հայկական գործակալություն), ԿԴԿ (Կենտրոնական հետախուզական վարչություն) - ԿԿԴ (կենտրոնական վերահսկիչ հանձնաժողով), ՀԱԲ (Հայ ազգային բանակ) - ՀԱՊ (Հայաստանի ազգային պատկերասրահ), ՀԿ¹ (հայկական ծրագիր), ՀԿ² (հայկական ծխախոտ) - ՀԿԿ (Հայաստանի կոմունիստական կուսակցություն), ՀՊՊ (Հայաստանի պետական պատկերասրահ) - ՀՊՊԹ (Հայաստանի պատմության պետական թանգարան), ՀՏԳ (հատուկ տնտեսական գոտի) - ՀՏԳՄ (Հայաստանի տիկնիկային (արվեստի) գործիչների միություն), ՌՈ (ռազմական ոստիկանություն) - ՌՕՈԻ (ռազմաօդային ուժեր)¹⁶:

¹⁵ Ուշագրավ է տառային հապավումների հետևյալ զույգը, որը մեկ սիմվոլի կամ տառային հապավումի փոփոխությամբ արտահայտում է իմաստային բևեռային հակադրություն, այսինքն հականշություն է դրսևորում. ՀՀԲ (Հին հայկազյան բառարան) - ՆՀԲ (Նոր հայկազյան բառարան):

¹⁶ Հետևյալ տարբերակային հապավումները ցույց են տալիս ընդհանուրի և մասնավորի փոխհարաբերություն. ԹԳՍ (թատերական գործիչների միություն) // ՀԹԳՍ (Հայաստանի թատերական գործիչների միություն), ԳԱ (Գիտությունների ակադեմիա) // ԳԱԱ (Գիտությունների ազգային ակադեմիա), ՍԽ (Անվտանգության խորհուրդ) // ՍԱԽ (Ազգային անվտանգության խորհուրդ), ԳՀԻ (գիտահետազոտական ինստիտուտ) // ԳՀՆԻ (գիտահետազոտական նախագծային ինստիտուտ), ՀԿԿ (Հայաստանի կոմունիստական կուսակցություն) // ՀԿ(Բ)Կ (Հայաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցություն), ՀՄՄՄ (Հայ մարմնամարզական ընդհանուր միություն) // ՀՄՍ (Հայ մարզական միություն), ՍԵՆՏՈ (անգլ. Կենտրոնական դաշինքի կազմակերպություն) // ՍԵՍՈ (անգլ. Հարավարևելյան Ասիայի դաշինքի կազմակերպություն):

Բ. Խառը հապավումներ: Այսօրինակ հապավական հարանուներում հանդիպում են այնպիսիները, որոնք ձևային նմանության հետ մեկտեղ դրսևորում են նաև իմաստային ինչ-ինչ ընդհանրություններ՝ ցույց տալով իմաստային միևնույն դաշտի հասկացություններ: Պատահական չէ, որ մասնագիտական գրականության մեջ հարանուների որոշման կարևոր հատկանիշներից մեկն էլ համարվում է իմաստով հարաբերակից լինելը¹⁷:

Հմնտ. ժամանակակից հայերենի համագործածական բառապաշար ներառված հետևյալ հապավական զույգերը. ավտոկայան (ավտոմոբիլի կայան) - ավտոկայարան (ավտոմոբիլային կայարան), ավտոտեսչություն (ավտոմոբիլային տեսչություն) - ավտոտեսուչ (ավտոմեքենաների տեսուչ), արտգործնախարար (արտաքին գործերի նախարար) - արտգործնախարարություն (Արտաքին գործերի նախարարություն), գիտաշխատակից (գիտական աշխատակից) - գիտաշխատող (գիտական աշխատող), զինկոմիսար (զինվորական կոմիսար) - զինկոմիսարիատ (զինվորական կոմիսարիատ)¹⁸, զինպատրաստականություն (զինվորական պատրաստականություն) - զինպատրաստականություն (զինվորական զինվորի պատրաստականություն):

Վանկային թեմաներով են կազմվել հետևյալ հարանունական հապավումները. զինկոմ (զինվորական կոմիսար) - զինկոմատ (զինվորական կոմիսարիատ):

Գ. Հարանունական հապավումներ և խոսքային միջավայր: Ձևաիմաստային այդօրինակ յուրահատկությունը ցուցաբերող հապավումների իմաստային տարբերություններն առավել ցայտուն ու որոշակի դրսևորում են ստանում խոսքային միջավայրում:

Հմնտ. ԲՈՅ - բուհ սիմվոլային (տառային) հապավումների հետևյալ գործածությունները. Պաշտպանությունը կայանալու է 2009թ. հունիսի 22-ին ժամը 15³⁰-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Անառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՅ-ի 019 մասնագիտական խորհրդում (ԼԱ, 2): Իսկ հետո ... իսկ հետո սկսվում է նույն այդ բուհի, ուսման, գիտելիքների նկատմամբ թաքուն կամ

¹⁷ Տե՛ս Ա.Ա.Մարության, նշվ. աշխ., էջ 55:

¹⁸ Հետևյալ հապավումները դրսևորում են բառային // վանկային տարբերականություն. զինկոմիսար // զինկոմ (զինվորական կոմիսար), զինկոմիսարիատ // զինկոմատ (զինվորական կոմիսարիատ): Մասնավորի և ընդհանուրի փոխհարաբերությունը դրսևորող փոփոխակներ են հետևյալ բառազույգերը. ավտոկայան (ավտոմոբիլի կայան) // ավտոհավաքակայան (ավտոմոբիլային հավաքակայան), բուժկետ (բժշկական բուժական կետ) // բուժկենտրոն (բժշկական բուժական կենտրոն), շրջողկորթածին (շրջանային ժողովրդական կրթության բաժին) // ժողկորթածին (ժողովրդական կրթության բաժին):

ցուցադրվող անտարբերության մի շրջան, որը շատ ուսանողների համար տևում է մինչև դիպլոմ ստանալը (ՎՊ, 65):

Այսպիսով՝

1. Համանունությունը և հարանունությունը՝ որպես լեզվական (ձևախմաստային) իրողություններ, ներունակ են դրսևորվելու նաև հապավական բարդությունների շրջանակներում:

2. Համանունական հապավումներում տարբերակվում են ընդհանուր բաղադրիչ (հապավույթ կամ թեմա) ունեցող և տարբեր բաղադրիչներով (հապավույթներով կամ թեմաներով) կազմված համանուններ:

3. Իրենց կազմում ընդհանուր հապավույթ ունեցող համանուններում առկա են տառային, վանկային և խառը համանունական հապավումներ:

Տարբեր հապավույթներով ձևավորված բաղադրություններում հաճախդեպ են համանունական տառային հապավումները:

4. Ձևախմաստային (համանունական) յուրահատուկ հարաբերություններ են ձևավորվում պարզ բառերի և հապավական բարդությունների միջև: Նրանցում առկա են հիմնականում նույնահունչ և նույնաձև (բառաքերականական) համանուններ:

5. Հարանունական հապավումներում առավել տարածված են տառային և խառը (երբեմն՝ վանկային) բաղադրությունները:

6. Հապավումների շրջանակներում հազվադեպ են ի հայտ գալիս տարբերակային, հոմանշային և հականշային գույգեր:

7. Թե՛ համանունական, թե՛ հարանունական հապավումների ձևախմաստային ընդհանրությունների ու տարբերությունների դրսևորման առումով կարևորվում է խոսքային միջավայրը:

ՍԿՋԲՆԱԳՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՈՒՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՂ - Ա. Դարիբյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Եր., Հայպետհրատ, 1947:

ԱՄ - Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., Եր. համալս. իրատ., 1990:

ԼԱ - Լ.Ավետիսյան, Համեմատություն-դարձվածային միավորները ժամանակակից հայերենում, թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Եր., 2009:

ԼԽ - Լ. Խաչատրյան, Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատ., 1996: Գունանուն բաղադրիչով համեմատություն-դարձվածային միավորները գրաբարում (ըստ Աստվածաշնչի), «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես, հ. 1, 4., «Իրավաբանական կենտրոն - PRESS», 2003:

ՀԶ, ՅԱ - Հ. Ջաջարյան, Յու. Ավետիսյան, Բառագիտություն, Եր., «Ձանգակ-97», 2007:

ԱԱ - Ա. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., «Լույս», 1969:

ՎՊ - Վ. Պետրոսյան, Հավասարում բազմաթիվ անհայտներով, Եր., «Սով. գրող», 1977:

Ր - Րաֆֆի, Պատմվածքներ և վիպակներ, Եր., «Լույս», 1986: